Շոթա Ռուսթավելի, «Վագրենավոր», ուսումնական նախագիծ, ճամփորդություն

Հաշվետվություն

Նախագծին սկսել ենք պատրաստվել մայիս ամսից՝ կրթահամալիրի տնօրենի առաջարկ-հանձնարարությամբ:

- «Լուսաստղ» ամսագրի սովորողների խումբը և վրացերենի խմբի մի քանի սովորողներ իմ և Ռինա Շագինյանի հետ սկսեցին աշխատել երկու ֆիլմի վրա:
- Ընթացքում ստեղծվեցին նաև ռադիոնյութեր, մեկ ցուցադրություն, նախապատրաստական աշխատանքի մասին պատմող ֆիլմեր:
- Նախագծային խումբը սովորեց երկու պար և Սայաթ-Նովայից երկու երգ:
- Շահանե Խաչիկյանը պատրաստեց երեք երգ՝ տարբեր լեզուներով:
- Հոկտեմբերի 18-22 կրթահամալիրի չորս դասավանդողից և 16 սովորողից բաղկացած աշխատանքային խումբը մեկնեց Թբիլիսի՝ մասնակցելու մրցույթին:

Մրցույթի մասին

Մեզ ընդունեցին, տեղավորեցին, ներողություն խնդրեցին, որ հյուրասիրություն չեն կարողացել կազմակերպել. արհմիությունը ֆինանսական ճգնաժամի մեջ է: Մրցույթը միջազգային էին որակավորել այս տարի. մասնակիցներից միայն մենք էինք այլ երկիր ներկայացնում: Բավականին անհետաքրքիր և տխուր մրցույթ էր. նախ՝ հյուրերի համար ապահովված չէր թարգմանություն՝ մի բան, որ պարտադիր է նման մրցույթների համար, երկրորդ՝ մոտեցումները հին էին ու ձևաչափը՝ ձանձրալի: Չկար նոր մոտեցում, սովորողի տեսակետ: Մեր ֆիլմերը միակն էին իրենց տեսակի մեջ. կարծում եմ, դրանք զարմացրին ու աշխուժություն հաղորդեցին:

Ի՞նչ տվեց մեզ մասնակցությունը նման մրցույթին:

Ամենակարևորը՝ միմյանց հետ շփվելու, գրական նախագծին մասնակցելու փորձ, վստահություն: Ամրապնդեց հավատը, որ ինչքան էլ մարդիկ հին մոտեցումներ ունենան, նորը կարող են ընդունել: Սովորողները սկսեցին կարևորել ու գնահատել մեր կրթահամալիրային միջոցառումները, նախագծերն ու մոտեցումները՝ համեմատելու բան ունեցան: Ես արձանագրեցի մի բան՝ մարդիկ իրենց գրականությունն ապրեցնում են ու նաև մեր միջոցով ապրեցնում, նորացնում, իսկ մենք...

Մրցանակ ստացանք...

Մեր սովորողները բազմաթիվ հարցազրույցներ տվեցին վրացական լրատվամիջոցներին ու պատմեցին կրթահամալիրի մասին:

Թբիլիսի, Գանձա, պայմանագրեր, ծանոթություններ

Մայա Կոբախիդզեն՝ Վրաստանի արհմիությունների նախագահը հետաքրքիր կին էր ու համագործակցության բանավոր պայմանավորվածությունը, կարծում եմ, կարելի կլինի շարունակել:

Թբիլիսիի 24 դպրոցի տնօրենի հետ նույնպես զրուցել ենք, պայմանավորվել համագործակցության մասին:

Գանձայի թ. 2 դպրոցի հետ կնքվել է գրավոր համագործակցության պայմանագիր:

Թբիլիսում երգել ենք Սայաթ-Նովա, պարել հրապարակներում, Սայաթ-Նովայի արձանի մոտ: Գանձայի դպրոցում կազմակերպվել է համատեղ դաս, որի ընթացքում սովորողներն ու դասավանդողները ներկայացրել են, թե ինչպես են աշխատել իրենց նախագծերի վրա, թե ինչպիսին է իրենց դպրոցը, ինչ հետաքրքիր նախագծեր են իրականացվում իրենց դպրոցում: Երգել են, պարել:

Ախալցխա, Ռաբաթ ամրոց

Այստեղ մեր սովորողները նկարահանվեցին ֆիլմում, կարդացին Ռուսթավելի, պատմեցին իրենց ու կրթահամալիրի մասին. ֆիլմը նկարահանվում էր վրացական կողմի նախաձեռնությամբ և իրենց ներկայացրած ձևաչափով:

Վրաստանյան մեր նյութերը կարող եք գտնել mskh.am կայքում, հեշտության համար մտեք կայքի իմ էջը:

Շնորհակալություն մեզ ընձեռված այսպիսի հնարավորության համար:

Մարգարիտ Սարգսյան